

Ս. ՍԻԼՈՒԻԱՅ ԱԿՈՒԻՏԱՆԱՑԻՈՅ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Ի ՔԱՂԱՔՆ ԵԴԵՍԻԱ



ՅԱՆՈՒՆ Աստուծոյ քիչ ժամանակ վերջը, այսինքն՝ յերուսաղէմ հասնելու երրորդ տարին, յետ այցելելոյ ամենայն տնօրինական տեղեաց՝ ուր ուխտի գնացեր էի, մինչդեռ կը փափաքէի հայրենիքս զառնալ, կամօքն Աստուծոյ ուզեցի ևս երթալ 'ի Միջագետս Ասորոց՝ յայց և 'ի տես հոն բնակող սրբակրօն միանձանց. որոց համար կ'ըսէին թէ այնչափ բազմաթիւ են և այնպիսի սուրբ և անարատ կենցաղավարութիւն մ'ունին, որ անհնար է պատմել բերանով: Կը փափաքէի դարձեալ Ս. Թովմաս առաքելոյն վկայարանին ուխտի գնալ մերձ յեղեսիա, ուր նորա բովանդատկ մարմինն անեղծ և անարատ կը պահուի: Անանէ սուրհանդակին ձեռքով առ Աբգար թագաւոր ուղղած թղթոյն մէջ ինքն իսկ տէրն մեր Յիսուս Քրիստոս խոստացեր էր, թէ յետ համբառնալոյս յերկինս կ'առաքեմ հոն զառաքեալն Թովմաս. այս թուղթս մեծ յարգանքով և խնամով կը պահուի յեղեսիա քաղաքի, ուր կայ նաև նոյն Առաքելոյն վկայարանն: Սիրելիք, կը փափաքիմ որ հաւատաք ինձ, թէ յերուսաղէմ սուրբ և տնօրինական տեղեաց ուխտի գնացող ամենայն քրիստոնեայք՝ ուխտի կ'երթան նաև այն տեղը, որ քան և չորս իջեվանք հեռու է յերուսաղէմէ: Եւ որովհետև Միջագետք մատ է Անտիոքայ, արժան համարեցայ ըստ կամացն Աստուծոյ՝ կոստանդնուպոլիս դարձած ժամանակս (վասնզի Անտիոքէն պիտի անցնէի) երթալ նաև 'ի Միջագետս, որ և կատարեցաւ կամօքն Աստուծոյ:

Արդ յանուն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ Անտիոք քաղաքէն ճամբայ ելայ 'ի Միջագետս երթալու, անցնելով ասորական կելէն² գաւառին (որ է Անտիոքիա) քանի մը օթեկաններէն կամ քաղաքներէն, և անտի մտնելով Աւգոստսփրատեան³ գաւառին սահմանաց մէջ՝ Հերապո-

1. Ըստ Ճանապարհորդարի ուրուք, տասնէօթն իջեվանք էին յերուսաղէմէ մինչև յԱնտիոք. իսկ յԱնտիոքէ մինչև յԵղեսիա՝ եօթն իջեվանք:

2. Կելէ Ասորոց կամ ասորական՝ գաւառ մի է ընդ մէջ Լիբանանու և Անտիլիա. նանու լեւանց, ինչպէս կը գտնեմք ևս 'ի դրութիւնս Չորրորդ դարու:

3. Աւգոստսփրատեան գաւառն, որոյ սահմանն է յարեւելից Տիգրատ գետն, նոյն էր յառաջն ընդ Կոմագենեայ գաւառի Ասորոց, և Եփրատեան կը կոչուէր. բայց 'ի համառօտագիծ պատմութեան Աւր. Վիկտորի կը կոչուի Աւգոստսփրատեան:

լիս¹ քաղաքը հասայ, որ նոյն գաւառին մայրաքաղաքն է: Եւ որովհետեւ այս քաղաքս շատ հոյակապ է, ճօխ և առատ յամենայնի, հարկ եղաւ որ հոն սակաւիկ մի դադար և հանգիստ առնուիմ, վասնզի Միջագետաց սահմանքն շատ հեռու չ'էին անտի: Հերապոլէսն ևս մեկնելով տասնևհինգ միոն կտրելէն վերջ՝ յեփրատ գետն հասայ: Շատ իրաւացի և գեղեցիկ կերպով գրեթե երկու օր անցան, կոչելով զայն՝ մեհ, յորդաջուր և անապիւն գետ: Հռոգանոսի նման սաստիկ և բուռն թափով կը հոսի, այս տարրերութեամբ միայն՝ որ եփրատ աւելի մեծագոյն է: Արդ որովհետեւ նաւերով հարկ էր անցնիլ այն գետն, մանաւանդ թէ մեծամեծ նաւերով, պէտք եղաւ այն պատճառաւ կէս օրէ աւելի սպասել հոն. և ապա զօրութեամբն Աստուծոյ եփրատ գետն ևս անցնելով՝ մտայ 'ի սահմանս Ասորական Միջագետաց:

Եւ այսպէս քանի մի իջնան անցնելէն յետոյ՝ քաղաք մը հասայ, որոյ անունն ըստ գրոյ է Բատանիս², որ և ցարդ իսկ կանգուն կայ: Այս քաղաքիս եկեղեցին ունի յիրաւի սուրբ, ճշնասուն և խոստովանող³ եպիսկոպոս մը, և քանի մը վկայարաններ: Շատ բազմամարդ է քաղաքն, և հոս կը բնակի գաւառին կուսակալն իւր գաղտնաստանական ատենով: Անտի ևս մեկնելով՝ յանուն Յիսուսի Գրիստոսի հասանք յեղեւսիա, և իսկոյն գնացինք յեկեղեցի: քաղաքին և 'ի վկայարան Ս. Թովմայի⁴: Կատարելով անդ ըստ սովորութեան մեր աղօթքները և ուրիշ ուխտական ջերմեռանդութիւնք՝ զորս կ'ընեն սովորաբար այն պիսի սրբազան տեղերը, կարգացինք ևս Ս. Թովմայի վկայարանութեան ինչ ինչ մասեր:

1. Հերապոլիս քաղաքն՝ զոր ամենահօգօր կը կոչեն Ամմանոս Մարկեղոս (Ա. Ի. Գ. 2) և Պրոկոպիոս, առ ժամանակօք մեծին Կոստանդիանոսի եղաւ մայրաքաղաք Եփրատեան գաւառին: Իսկ երբ քրիստոնէութիւնն ծաղկեցաւ 'ի Նմա, Նորէն իւր հին անուամբն Բամբիսկէս կը կոչուէր. իսկ հիմակ կը կոչուի Պարա-Բամբուք կամ Պրոքսի:

2. Բատանիս կամ Բաթնէ քաղաքն կը գտնուի յաշխարհին Ոսգրոյեայ Աստ Թուրքի Թէ Բաթնէ քաղաքը շփոթեթէ և ընդ Բասանու կամ Բատանեան գաւառին՝ 'ի Նմանա ժայռութեան անտակ: Որովհետեւ Բաթնէ քաղաքն հինգ միոն հեռու է յեփրատ գետոյ, իսկ 'ի Հերապոլսոյ քառն և մեկ միոն (Ճանապարհք. Անտոն. էջ 191): «Բաթնէ... փոքու խորացաւ մեկուսի է 'ի գետոյն եփրատայ» (Ամմ. Մարկեղ. Ժ. Ի. Գ. 3):

3. Այս ժամանակներն Բաթնէ քաղաքին եպիսկոպոսն կը կոչուէր Աբրահամ, որ Վաղէս կայսեր միջոց շատ տանջանքներ կրեց, որոյ համար խոստովանող կը կոչուի. իսկ իւր միանման լինելն նախ քան զեպիսկոպոսութիւն՝ անձնաւթ էր մեզ: Երկու նամակք կը գտնուին Ս. Բարսէի առ նա (315 և 326): Տիրման, Յիշատակարանք եկեղ. Պատմ. Դ, էջ. 337:

4. Եղեւսիա 'ի գաւառին Ոսգրոյեայ միտեայ Ճանապարհաւ հեռի է 'ի Բաթնէ քաղաքէ (Պրոկոպ. Պ. Պարս. Ի. 12). անդ մեծ ջերմեռանդութեամբ կը մեծարէին Ս. Թովմաս առաքելոյն մարմինը, որում 'ի պատիւ կառուցեթ էին Եղեւսիայից մեծ և հոյակապ եկեղեցի մը: Ուխտաւորացն մեր կը զանազանէ զեկեղեցին 'ի վկայարան Ս. Թովմասու, որովհետեւ նորա գալստենէն սակաւ մի յիտոյ Ս. Թովմայի գերեզմանն փոխադրեցաւ յեկեղեցին 'ի Սիրոս եպիսկոպոսէ յամին 394. (Ժմնկգր. Եղեւս. Աստեմանի Մատեն. Արեւելեան Ա. էջ 399):

Աստ նորաշէն, մեծ և գեղեցիկ եկեղեցի մը կար, զոր յիրաւի արժան էր տուն Աստուծոյ կոչել¹. և վասն զի շատ բան կ'ուզէի տեսնել հոս՝ այն պատճառաւ հարկ եղաւ որ քաղաքին մէջ երեքօր կենամ: Արդ այսպէս բազմաթիւ վկայարաններ տեսի աստ. տեսայ նաև բազմաթիւ միանձուներ, յորոց մաս մը վկայարանաց մէջ կը բնակէին, և մաս մ' ալ քաղաքէն հեռու քարանձաւաց խորշերուն մէջ: Եւ վասն զի այս քաղաքիս եպիսկոպոսն յիրաւի սուրբ, երկիւղած, ճգնաւոր և խոստովանող² էր, յօժարութեամբ ընդունելով զիս՝ ըսաւ. Սիրեցեալ դուստր իմ, տեսնալով որ ջերմեռանդութեան համար այսչափ մեծ աշխատանք յանձն առեր ես, աշխարհիս ծայրէն մինչև աստ գալով, արդ եթէ կը փափագիս՝ կը ցուցնեմք քեզի հոս եղած՝ ամէն սուրբ տեղերը և հաւատացելոց պատշաճ բաները:

Այն ատեն նախ Աստուծոյ շնորհակալ լինելով՝ շատ աղաչեցի որ ըսածը կատարէ: Արդ նախ և առաջ Արգար թագաւորին պալատը³ տարաւ զիս, և հոն ցուցուց ինծի նորա նախատիպ և նմանահան քանդակեալ պատկերը, ըստ իրենց բանին, այնչափ փայլուն և ողորկ կենայ քարի վրայ՝ որ կարծես թէ մարգարիտ (ազնիւ քար) էր. այն քան դակէն կը տեսնուէր որ Արգար իմաստուն և երկիւղած այր մ' եղած պիտի լինի. այն ատեն ըսաւ ինծի սուրբ եպիսկոպոսը. Ահա Արգար թագաւորը, որ զգրիստոս չտեսած՝ հաւատաց թէ նա Աստուծոյ Որդի է: Այն քանդակին մօտ մարմարինէ ուրիշ պատկեր մ' ալ ցուցուց, և ըսաւ թէ այս ալ իր որդւոյն Մագնոսի պատկերն է, որ յիրաւի շնորհալից դէմք մի էր⁴. Յետոյ՝ պալատին ներքին մասը գնացինք. ուր

1. Եղեհոյ եկեղեցւոյն վրայ այսպէս կը գրէ Սոկրատ (Եկեղ. Պատմ. Ա. Դ, գլ. 18). « Եբեղ և հոյակապոյժ 'ի նմին քաղաքի հոգակի տաճար Ս. Թովմայի առաջնէն, յորում բազմութիւնք հաւատացելոց գումարին յաճախ վասն տեղւոյն սրբութեան: Կը պատմէ գարձեալ, թէ յամին 372 (յորում նորոգուեր էր), Վաղէս կայսրն լսելով նորա գեղեցկութիւնը եկաւ տեսնելու, և հրամայեց որ հալածեն ան. աի զուգրափառս: Մեր ուխտագնացն ալ նորայիւն կը կոչէ զայն, վասնզի նորա ճանաչողորհորդութիւնն պատահեցաւ սակաւիկ մի յետոյ քան զմահ Վաղէս կայսր: »

2. Սոյն եպիսկոպոսս է Ս. Եււղբոս, որ հալածուելով 'ի Վաղեսէ՝ աքսորուեցաւ յԱնտիոն քաղաք. Եղեպոսի, ուստի և խոստովանող կը կոչուի: Ի Հումմ. վկայաբանութեան այսպէս կ'ընթեռնուի. « Ս. Եււղբայ խոստովանողն և եպիսկոպոսի Եղեհոյ քաղաքին Ասորոց »: Անոր վկայարանութիւնն առնուած է 'ի Թեոփորէ տեայ (Բոլանդ. 5 Մայիս, Հտ. Բ. էջ 10). յորում ըսաւ չ'ըսուեր թէ ինքն յառաջ քան զեպիսկոպոսութիւնն՝ միանձն եղած ըլլայ: Կատարեցաւ յամին 698 Եղեհոս զուց թուականին, որ է յամս 387-388 թուականին Քրիստոսի: Նորա յաջորդեց Կիւրոս (Ժամանակագր. Եղեհ. յԱստեմանի Մատեն. Այլեւ. Բ. էջ 399):

3. Երկու արքունի պալատք կային յԵղեհոս. մին՝ որ մեծ կը կոչուէր և ուստի առատութեամբ պարէր կը բոլէին, իսկ միւսն՝ զոր ինքն իսկ Արգար շինել տուեր էր իւր քաղաքին մէջ յամին 517 Եղեհոյ թուականին (Ժամանակագր. Եղեհ. Բ. էջ 390 և 393):

4. ՅԵղեհոս այլեայլ գրամք գտնուեցան՝ յորս քանդակեալ են պատկերք թագաւորացն Արգարու և Մանենայ կամ Մասենայ, Ագրիանոսի Ժամանակէն մինչև 'ի Ժամանակս Քորդիանոսի. յորոց մին՝ առ Ժամանակօք Կոմնոսի կայսրէ՝ Արգարու և

տեսայ ձկնալից աղբիւրներ¹։ այս ձկանց նման համեղաճաշակ, մեծ և պաղպաղուն ոչ երբեք տեսայ։ Գաղաքին մէջ՝ այս պալատէն առաւ տուրիստներ բոլորն և արծաթափայլ մեծ դետի շուրէն զատ ուրիշ չուր չկայ։ Սուրբ եպիսկոպոսը այս շրջին համար ինծի այսպէս պատմեց։ Տեսաւ մերոյ առ Արգար թագաւոր յղեալ ('ի ձեռն Անանէ սուր. հանդակի) և Արգարու առ Տէրն մեր զրած խղիթէն քիչ ժամանակ վերջը, ինչպէս նոյն խղիթին մէջ ալ գրուած է, Պարսիկը կը յարձակին և այս քաղաքը կը պաշարեն։ այն ատեն Արգար իսկայն Տեսաւ մերոյ Յիսուսի Գրիստոսի թուղթը բերել կու տայ, և բոլոր բանակով հանդերձ աղօթեալէն վերջը՝ կ'ըսէ. Տէր Յիսուս, խոստացար մեզի որ ոչ որ 'ի թշնամեաց պիտի յարձակի այս քաղաքիս վրայ, և արդ ահա ապիկ Պարսիկը կը պատերազմին ընդ մեզ։ Այս խօսքերը ըսելէն վերջը, երբ թագաւորն ինքնին թուղթը բացած և ձեռքն առած վեր վերցուցեր էր, և ահա իսկայն թանձր խաւար և մթութիւն մը պատեց քաղաքին գոնեմը, սակայն միայն Պարսիկը աչաց առջև՝ որ քաղաքէն գրեթէ երեք մղոն հեռու էին, Պարսիկը այս մթութեան պատճառաւ այնպէս շուտով խուլիցեցան՝ որ և ոչ կրցան բանակ գնել, քաղաքին չորս կողմը կը շրջէին երեք մղոն հեռաւորութեամբ։ և այնչափ իրար անցեր էին, որ այլ ևս չէին տեսներ թէ որ կողմէն պէտք է քաղաք մտնել։ սակայն երեք մղոն հեռաւորութեամբ քաղաքը պաշարեալ պահեցին քանի մը ամիս։ և երբ տեսան որ անկարելի է քաղաքը մտնել, ուղեցին ծարաւով սպառել զքաղաքացիս։ Վասն զի քաղաքիս վերի կողմը տեսած բլուրդ, ով սիրելի, այն ժամանակները միայն անիկայ քաղաքիս շուր կը մատուցանէր. զայն տեսնելով Պարսիկը՝ քաղաքէն խոտորեցուցին շուրը, և անոր ընթացքը դարձուցին հակառակ կողմը, ուր իրենց բանակը դրած էին։ Նոյն օրը և նոյն ժամուն՝ յորում Պարսիկը խոտորեցուցին շրջն ընթացքը, Աստուծոյ հրամա-

նորս Մաննոս որդւոյն պատկերները կը կրէ, թէրևս այն արձաններէն առնուած, որք կը պահուէին 'ի պալատան մինչև 'ի ժամանակս Արտաշէսացին։

1. Եդեսիա քաղաքն այսպէս կը կոչուի 'ի զօրութենէ Ըուրցն, ինչպէս կ'ըսէ Ստեփ. Բիւզանդացի, «ὁ δὲ τῆς τοῦ ὑδῶτος οὐμῆς οὐ τῶ ἀληθινῶς» (Պատմ. Բն. Ա. Ծ, 21) կ'ըսէ։ «Եդեսիա» որ յերթնն ժամանակի Անտիոքիա կոչէր, Կալլիստոսէն անուանեցաւ յաղբերէն»։ Եւ յԵդես. ժամանակագրութեան այսպէս կ'ըն. թեռնումը։ «Յամին հինգհարիւրորդի և երեքսուսաներորդի առ ինքնակալութեամբն Սեւերոսի (յամին 202-303 թուականին Գրիստոսի), 'ի ժամանակս Արգարու որդւոյ Մաննոսի թագաւորի, յամենան Նոյիմքերի, արդիւն այն քիսեալ 'ի մեծ ապարանիցն Արգարու մեծի ըստ սովորութեան յորդեալ զեղաւ յոյժ յոյժ, մինչև ողողանէ զընաւ իսկ կողմանս. զչաւիթն, զսրահս և զապարանս թագաւորին»։

2. Գրիստոսի խոստման մասին՝ թէ քնաւ թշնամիք պիտի չ'որեն քաղաքին, ամենին հետք մը չի գտնուիր Եւսեբիոսի տեսած ձեռագիր թղթոյն մէջ. սակայն կը յիշատակեն զայն Ս. Եփրեմ (Գր. Ա. էջ 363) և Դարեհ իշխան 'ի թղթին առ ինքնակայն։ Նոյն բանը կը պատմէ ևս Պրոկոպիոս (Պատմ. Պարս. Ա. Բ, գլ. 12), թէ պէտէս քնաւ հաւատք չ'ընծայեր, երբ իւր ժամանակները Պարսիկը եկեր պաշաւ, թէր էին զԵդեսիա։ Պրոկոպիոսէն առեր և ևս Եւագր (Եփեղ. Պատմ. Ա. Դ, գլ. 27)։

նաւ այս տեսած աղբիւրներդ ինքնիրենց սկսան բղխել, և Աստուծոյ շնորհօք այն օրէն սկսեալ մինչև ցայսօր կը բղխեն նոքա անսպառ, ընդ հակառակն Պարսից դարձուցած ջուրը, նոյն ժամուն իսկ այնպէս չորցաւ և ցամքեցաւ, որ պաշարողները և ոչ օրուան մը համար պէտք եղած ջուրը կըրցան գտնել, ինչպէս նաև այսօր ալ կը տեսնուի. և յիրաւի այն ատենէն մինչև ցայսօր ամենին ջուր չտեսնուեցաւ այս տեղ. և այսպէս ըստ խոստմանն Աստուծոյ, պաշարողք ստիպուեցան իրենց տեղը՝ այսինքն՝ ի Պարսկաստան դառնալ¹։ Ուրիշ անգամներ ևս երբոր թշնամիք կը յարձակէին քաղաքիս վերայ, քաղաքին դրան առջև կը տանէին այս թուղթը և կը կարդային, և իսկոյն ակնարկութեամբ Տեառն բոլոր թշնամիք կը հալածուէին և կը փախչէին։ Այս ալ պատմեց ինծի սուրբ Եպիսկոպոսը, որ այն տեղը՝ ուր ժայռէն բղխեցին այս աղբիւրներն՝ առաջ դաշտ էր ընդ մէջ քաղաքին, որ է ՚ի ստորոտս պալատան Արգարու։ Վասն զի այն ատեն՝ ինչպէս հիմայ կը տեսնես՝ Արգարու պալատը բարձրագոյն դրից վրայ էր. որովհետև հին ատեն սովորութիւն էր, որ արքունի պալատը միշտ բարձր տեղերու վրայ կը շինէին. այլ երբ աղբիւրներն սկսան այն տեղւոյն մէջ բղխել՝ Արգար իր որդւոյն Մագնոսի համար, որոյ պատկերը միւս կողմը դրուած կը տեսնես, այս պալատս շինեց այնպիսի կերպով՝ որ նոյն աղբիւրներն պալատին մէջ փակուին։ — Սուրբ եպիսկոպոսը այս ամէնքան պատմելէն վերջը՝ ըստ ինծի. երթմանը հիմայ տեսնեմք այն դուռը՝ ուսկից Անանի սուրհանդակը մտաւ յիշած թղթովս։ Երբ դուռը՝ հասանք՝ եպիսկոպոսը աղօթեցէն վերջը կարգադր մեզի թուղթերը, և զմեզ օրհնելով՝ դարձեալ սկսաւ աղօթել. նոյն սուրբ եպիսկոպոսը այս ալ ըսաւ ինծի. Անանի սուրհանդակը Տեառն մերոյ կողմանէ թուղթը բերած ժամանակ այս տեղէն անցնելէն վերջը ցայսօր զգուշութեամբ կը պահպանեն այս դուռս՝ որպէս զի չըլլայ թէ պիղծ կամ անսուրբ բան մը անցնի այս դռնէն. և ոչ դիակ մը կը թողուն որ անցնի այս տեղէն։ Սուրբ եպիսկոպոսը ցուցուց մեզի նաև Արգարու և նորա բոլոր ընտանեաց դամբանները², որք շատ գեղեցիկ՝ բայց ըստ հին սովորութեան շինուած էին։ Արգար թագաւորին նախ.

1. Բնաւ յիշատակութիւն մը չ'ունիմք ՚ի պատմութենէ այս պաշարման վրայ, զոր աստ կը պատմէ եպիսկոպոսն։

2. Եւսեբիոս ՚ի հասարակաց գիւնատանց օրինակեց Քրիստոսի թուղթը, զոր՝ ինչպէս վերը յիշատակեցինք՝ պաշարման միջոց եպիսկոպոսն կը տանէր ՚ի դուռն քաղաքին. այս ուխտագնացութեան տարին ևս՝ դրան վրայ կը պահէին զայն Եդեսիացիք, ինչպէս նաև ՚ի ժամանակս Պրոկոպիոսի (Պատ. Պարս. Ա. ԺԲ, ԳԼ. 13)։ Այս թուղթն փոխադրուեցաւ ՚ի դուռն առ ժամանակօք Աոստանգիանոսի, երբ Շապուհհ կրկին յարձակեցաւ Միջագետաց վրայ։

3. Արգարու և նորա ընտանեաց շիրիմն՝ ըստ վաղեմի սովորութեան՝ դրան մօտ շինուած էր։ Ի ժամանակագրութեան Եդես. (էջ 389) այս խօսքերս կ'ընթեռնուեմք. « Յամին չորեքսարկւորդի (89 ամ յետ Քրիստոսի) շինեաց իւր շիրիմ Արգար արքայ »։

կին պալատը ևս տարաւ զմեզ, և ուրիշ ամէն տեղերը ցուցուց մեզի: Ուզեցի նաև թէ Որդարու առ Տէրն մեր և թէ Տեսառն մերոյ առ Աբգար զրաժ թղթերը՝ զորս կարգաց մեզի սուրբ եպիսկոպոսը՝ առնուլ և օրինակել, ինչպէս որ կատարեցի:

ՀԻՆ ՔՆՍՐ

ՏԱՂ

Ի ՍՈՒՐԲ ԽԱԶՆ

Ահա որ խորհուրդ ահնդ և 'ի սկըզբան լինելութեան

Էր ծածկեալ Երրորդութեանդ 'ի զաւրութեանցն իմանալի:

Յադին դրախտին յայտնեալ ծառն կենաց և կենսատու,

Սրօվրէիւք շըրջապատեալ քրօվրէական մետաքս եղեալ:

Դու հրկնից գերագունակ և գաւազան քառաստեղեան՝

Գլորեցելոյ Հաւր գաւազան ցուպ 'ի ձեռին Հաստատութեան:

Գուշակեալ մարգարէիցն զոյանայր 'ի Գողգոթա

Ի ծայրս ոստոց բերեալ պըտուղ ծիլ ծայր ունէր զունողն երկնից:

Նաւապետեալ նահապետացն 'ի Համաթուրցն Հեղեղաց:

Յարմարումն տապանի դու և տապան իմանալի:

Զվէմն Հարկանէր գաւազանաւ և ապառաժն աղբիւրանայր

Խարայելեան ազն յորդորէր 'ի զանաղան Հրաշս նորոգէր:

Եսայիաս զիմեալ ասէր 'ի յԵդեմայ ելեալ փրկիչն,

Կարմրավառ աւար առեալ վառ 'ի վառեան Հընձան կոխեալ:

Տախտակ մատենագրի և տպագիրն քառատեսլեան

Ի յերկրէ ըոյս բարունակ քըննողսհրաշ անբըննելի:

Ի լիբանան ծառ ծաղկեցաւ վարդափըթիթ սաղարթաբեր,

Զէմանուէլն պըտղաբերեաց քաղցրաճաշակ առիթ կենաց:

Եւ 'ի բարձունս փըրկել զգերեայս, աւար առնոր 'ի թընամուցն,

Զանբաւելին ասեմ՝ ըյխաշն ընդ որ Հիանամ և զարհուրիմ:

Զփառս 'ի վեր առաքելով ամենասուրբ Երրորդութեանն,

Այն որ աւրհնեալն է յաւիտեան, արդ 'ի ներկայս և յապառնին:

